ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N 002606

ք. Երևան Խորհրդային ազգա-յին-քաղաքական անձանց ավագանի գործադիր մարմնի ղեկավար Հ.Հ. դեմ տնօրեն _____ 20 11 2025 թ.

այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ Պատվիրատու, մի կողմից և ԳԱԶԱՐԴ- սպը, ի դեմս տնօրեն Ս.Խաչատրյանի, այսուհետ սույն պայմանագրի տեքստում՝ Կատարող, մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի հանձնարարությամբ մատուցել սույն պայմանագրի 1.2. կետում նշված ծառայությունները, իսկ Պատվիրատուն պարտավորվում է վճարել այդ ծառայությունների համար՝ սույն պայմանագրի 3-րդ կետով. սահմանված կարգով:

1.2. Կատարողը պարտավորվում է Պատվիրատուին մատուցել հետևյալ ծառայություն-ները՝ _____ Գազի ծխաօդատարների ստուգում հրթջ ապի գրանցում

2. Կողմերի իրավունքները և պարտադրությունները

2.1. Կատարողը պարտավոր է՝

2.1.1. Ծառայությունները մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով,

2.1.2. Պատվիրատուի պահանջով անհապաղ և անհատույց վերացնել հայտնաբերված բոլոր թերությունները,

2.1.3. Անձամբ կատարել ծառայությունները,

2.1.4. հաշվետու լինել Պատվիրատուին՝ կապված սույն պայմանագրի հետ առաջացած բոլոր հարցերի հետ:

2.2. Կատարողն իրավունք ունի՝

2.2.1. Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ կետով սահմանված կարգը երկու անգամ խախտելու դեպքում հրաժարվել սույն պայմանագրի կատարումից:

2.3. Պատվիրատուն իրավունք ունի

2.3.1. Ցանկացած ժամանակ ստուգել Կատարով ծառայությունների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու նրա գործունեությանը,

2.3.2. Ցանկացած ժամանակ հրաժարվել պայմանագիրը կատարելուց՝ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարման մասին տեղեկություն ստանալը մատուցված ծառայությունների չափին:

2.3.3. Պատվիրատուն պարտավոր է ծառայությունների դիմաց վճարել սույն պայմանագրի 3-րդ կետում նշված գնին և կարգին համապատասխան:

3. Պայմանագրի գինը և հաշվարկների կարգը

3.1. Սույն պայմանագրով. ծառայությունների համախառն վարձատրումը կհաշվարկվի համաձայն աշխատանքների կատարման հանձնման ընդունման արձանագրությունից հետո դուրս գրված հաշիվ ապրանքագրի որը կներառի հարկերը և պարտադիր այլ վճարները՝

108 000 ՀՀ դրամ:

3.2 Վճարումը կկատարվի մինչև սույն պայմանագրով նախատեսված աշխատանքների ամբողջովին կատարման ամսվան հաջորդող ամսի 15-ը՝ ստորագրված և վավերացված ընդունում-հանձնման արձանագրության հիման վրա:

4. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ - ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

5. Այլ պայմաններ

5.1 Սույն պայմանագիրը կնքվում է մինչև 2026թ. և ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:
5.2 Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ դադարեցվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով:
5.3 Սույն պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:
5.4 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:
5.5 Սույն պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Պատվիրատու՝	Կատարող՝
Քաղաքացի [redacted] (Հանրագիտարանի [redacted] գրադարան ՊՍ)	ԳԱԶԱՐԴ սպը
Հասցե՝ Գրիգոր Լուսավորչի 2/2	Երևան Պռոշյան 2/1
ՀՎՀՀ 02505554	2վհհ 03555685
ՀՀ գլխ. գրադ.	Արարատ բանկ փբը
հ/հ 90001102426	1510054854390100
	հեռ. 096-16-00-02
Կ.Տ.	Կ.Տ.